ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1067-Ա/Ք «28» դեկտեմբերի

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14-րդ կետի «դ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «Արցախի հետ համագործակցության ծրագիր» մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Մրցույթի արդյունքների հաստատման և գիտական թեմաների ցանկերում փոփոխությունների կատարման լիազորությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳ նախարարի
«28» դեկտեմբեր 2015 թ.
N 1067-Ա/Ք հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒԹ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն կազմակերպում է «Արցախի հետ համագործակցության ծրագիր» **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ մրցույթի մասին հայտարարության հրապարակման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությունում՝ աշխատանքային օրերին ժամը 14:00 - 17:00 (հեռախոսներ՝ 21-01-40 (*112), 21-01-40 (*113)):

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարության գիտության պետական կոմիտե

Հավելված N 2
ՀՀ ԿԳ նախարարի
«28» դեկտեմբեր 2015 թ.
N 1067-Ա/Ք հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՎԵՐ

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ՄՐՑՈՒՅԹԻ

1. «Արցախի հետ համագործակցության ծրագիր» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) միջև «Գիտատեխնիկական ոլորտում համագործակցության մասին» 2009 թվականի նոյեմբերի 15-ի պայմանագրի ու Կոմիտեի և Նախարարության միջև 2010 թվականի նոյեմբերի 29-ին կնքված «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության դրամաշնորհների տրամադրման մասին ծրագրի»:

2. Կոմիտեն և Նախարարությունը բնական գիտությունների բնագավառում «Ֆիզիկա և աստղագիտություն» (մասնագիտական դասիչը՝ 1.3), «Քիմիա» (մասնագիտական դասիչը՝ 1.4), «Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ» (մասնագիտական դասիչը՝ 1.5) և «Կենսաբանական գիտություններ» (մասնագիտական դասիչը՝ 1.6) մասնագիտություններով գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար 12 կամ 24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրեն 3-4 անձից (ներառյալ խմբի ղեկավարը) բաղկացած գիտահետազոտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված գիտական թեմաներին (այսուհետ՝ Թեմա):

3. Խմբի ղեկավարը պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ և դրամաշնորհի իրականացման ընթացքում բնակվի Հայաստանի Հանրապետությունում: Խմբի մյուս անդամները պետք է հանդիսանան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական բնակիչներ և դրամաշնորհի իրականացման ընթացքում բնակվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

4. Խմբի ղեկավար կարող է հանդիսանալ գիտական աստիճան ունեցող անձը, ով ունի առնվազն հինգ տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին հինգ տարիների ընթացքում գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն հինգ հոդված:

5. Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի հայտերում: Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) Թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ Թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Թեմաների ֆինանսավորման սկիզբը:

6. Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտաշխատող, կամ ասպիրանտ, կամ մագիստրատուրայի ուսանող:

7. Մրցույթին մասնակցելու համար պետք է Խմբի ղեկավարի կողմից ներկայացնել Հավելված N 2.1-ին համապատասխան դիմում և Հավելված N 2.2-ի «Ձևերին» համապատասխան հայտ՝ սոսնձված ծրարով:

8. Հայտին պետք է կցել այն գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի դրական կամ բացասական երաշխավորությունը, որտեղ կատարվելու է Թեման:

9. Հայտը Կոմիտե պետք է ներկայացնել առձեռն, աշխատանքային օրերին, ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև 2016 թվականի հունվարի 27-ը ներառյալ:

10. Հայտը պետք է ներկայացնել մեկ տպագիր և մեկ էլեկտրոնային (խտասկավառակով կամ info@scs.am էլեկտրոնային հասցեով) տարբերակներով:

11. Խմբի ղեկավարի ստորագրությունը պետք է լինի Կազմակերպության գիտական քարտուղարի կամ ղեկավարի ստորագրությամբ հաստատված և Կազմակերպության կնիքով վավերացված:

12. Հայտը պետք է ներկայացնել A4 ձևաչափի թղթի վրա տպված, 1,5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով («Sylfaen»՝ հայերեն և «Times New Roman»՝ անգլերեն ու ռուսերեն տեքստերի համար)՝ պահպանելով աղյուսակների

ամբողջականությունը: Էջերի բոլոր կողմերից պետք է թողնել 2,5 սմ լուսանցք և հաջորդաբար համարակալել ներքևի աջ անկյունում: Հայտի էլեկտրոնային տարբերակը պետք է ներկայացնել «Microsoft Word» ձևաչափով՝ մեկ ֆայլով, որը չպետք է գերազանցի 1,5 MB-ը:

13. Հավելված N 2.2-ի «Ձև 3»-ը կազմելիս օգտվել ֆինանսական նախահաշիվ ներկայացնելու ուղեցույցից (Հավելված N 2.3):

14. Խմբի անունից հանդես է գալիս միայն ղեկավարը:

15. Մրցույթին ներկայացված հայտերը բացվում են 2016 թվականի հունվարի 29-ին, ժամը 12:00-ին:

16. Կոմիտեն անցկացնում է հայտերի տեխնիկական ստուգում:

17. Մրցույթի հայտը չի քննարկվում, եթե այն.

- լրացված է ոչ ճիշտ կամ ոչ ամբողջությամբ,
- ներկայացված է «.zip» և այլ սեղմված (մի քանի փաստաթուղթ պարունակող) ձևաչափով,
- ուղարկված է ֆաքսով:

18. Մրցույթի պայմաններին բավարարող հայտերը տրամադրվում են մասնագիտական փորձագիտական խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ)՝ Կոմիտեի փորձագետների շտեմարանում ընդգրկված փորձագետների ներգրավմամբ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

19. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Թեմայի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, իրականացման նախադրյալները, Խմբի ղեկավարի և կատարողների ձեռքբերումները գիտության տվյալ բնագավառում, նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը նախատեսված հետազոտությունների իրականացմանը, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների և ֆինանսական նախահաշվի հիմնավորվածությունը, գիտության տվյալ մասնագիտության առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

20. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր հայտի համար փորձագետը լրացնում է Կոմիտեի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը (Հավելված N 2.4)՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին:

21. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է:

22. Երկու փորձագետների գնահատականների՝ գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոս և ավելի չափով տարբերվելու դեպքում հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Առաջին երկու փորձագետների գնահատականների և երրորդ փորձագետի գնահատականի հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

23. Փորձագետի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի 85 տոկոսը:

24. Խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորումը գնահատվում է Խորհրդի կողմից: Խորհրդի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի 15 տոկոսը:

25. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

26. Կոմիտեի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

27. Հայտերի գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր մասնագիտության համար ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

28. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը՝ առաջնայնությունը տալով արդեն իսկ իրականացվող համագործակցության շրջանակներում ներկայացված հայտերին:

29. Կոմիտեի նախագահը, ելնելով ՀՀ պետական բյուջեից «Արցախի հետ համագործակցության ծրագրի» համար հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր մասնագիտության շեմային գնահատականը, որին հավասար կամ դրանից բարձր գնահատված Թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Կոմիտեի նախագահը հաստատում է Թեմաների

ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման ծավալը:

30. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և Թեմաների կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալները:

31. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարի միջոցով գիտահետազոտական խմբերի ղեկավարներին է տրամադրում հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականներն ու գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ մասնագիտության շեմային գնահատականը: Եթե հայտը ներկայացվել է անհատական նախաձեռնությամբ, ապա հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականն ու գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ մասնագիտության շեմային գնահատականը տրամադրվում են Խմբի ղեկավարին:

32. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր Խմբի ղեկավարի և կատարողների միջև, ինչպես նաև գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և գիտական թեմայի ղեկավարի միջև («Ծառայությունների մատուցման պայմանագիր»):

33. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի միջև ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր՝ 32 կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

☐ **Դիմում**
☐ **Տիտղոսաթերթ («Ձև 1»)**
☐ **Նախագծի անոտացիա**
☐ **Նախագիծ**
☐ **Ղեկավարի որակավորման տվյալները («Ձև 2.1»)**
☐ **Տեղեկություններ նախագծի կատարողի մասին («Ձև 2.2»)**
☐ **Ֆինանսական նախահաշիվ («Ձև 3»)**
☐ **Ֆինանսական նախահաշվի մեկնաբանություն («Ձև 4»)**

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել կից ներկայացվող հայտը՝ «Արցախի հետ համագործակցության ծրագիր» մրցույթին մասնակցելու համար:

Դիմող՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«____» _____ 2016 թ.

ՀԱՅՏ

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ՄՐՑՈՒՅԹԻ

Հայտը հանձնված է «_____» _____ 2016 թ. Ծածկագիր՝ _____
(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

Ձև 1

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի

- վերնագիրը (հայերեն, անգլերեն և ռուսերեն՝ յուրաքանչյուրը 15 բառից ոչ ավելի)
- բնագավառը
- մասնագիտական դասիչը
- բնույթը

տեսական		հիմնարար	
փորձարարական		կիրառական	

2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն և անգլերեն լեզուներով)

3. Կազմակերպության

- լրիվ անվանումը
- կազմակերպաիրավական ձևը
- գերատեսչական պատկանելությունը
- հասցեն
- հեռախոսը
- էլեկտրոնային հասցեն

4. Խմբի ղեկավարի

- ազգանունը, անունը, հայրանունը
- ծննդյան թիվը
- գիտական աստիճանը
- պաշտոնը
- հեռախոսը
- էլեկտրոնային հասցեն

5. Կազմակերպության

- լրիվ անվանումը
- կազմակերպաիրավական ձևը
- գերատեսչական պատկանելությունը
- հասցեն
- հեռախոսը
- էլեկտրոնային հասցեն

6. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ ամիս

7. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը_____

8. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը _____ հազար դրամ

9. Վերադիր ծախսերի գումարը _____ հազար դրամ

10. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ

11. Խմբի ղեկավարի ստորագրությունը _____

12. Կազմակերպության գիտական քարտուղարի (կամ ղեկավարի) ստորագրությունը

«____» _____ 2016 թ.

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ*

*Համառոտ պարբերությամբ (300 բառից ոչ ավելի) ներկայացնել նախագծի նպատակները՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

ՆԱԽԱԳԻԾ*

---

* *Ներկայացնել հայերեն, մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.*

1. խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, Թեմայի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, եռամյակային փուլերը, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մինչև 8 էջ),

2. տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները (մինչև 2 էջ),

3. օգտագործված գրականության ցանկը:

Ձև 2.1

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն և ռուսերեն)

2. Ծննդյան տարեթիվը

3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն)

4. Գիտական աստիճանը

5. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը

6. Հրատարակված

- գիտական հոդվածների թիվը
- մենագրությունների թիվը

7. Արտոնագրերի թիվը

8. Լիցենզիաների թիվը

9. Սկսած 2010 թվականից՝ հրատարակված գիտական հոդվածները (նշել հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)

1)

2)

3)

4)

5)

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

10. Ստացված օտարերկրյա դրամաշնորհները

1)

2)

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

_____

(ղեկավարի ստորագրությունը)

«____» _____ 2016 թ.

Ձև 2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ*

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (անգլերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (աշխատանքային, տան, բջջային)	
Էլեկտրոնային հասցե	
Նախագծի հետ առնչվող հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1. 2. 3. 4. 5.	

* *Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար*

Ձև 3

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Հայտի ծածկագիրը _____

(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկը)						
	2016			**2017**		
ազգանուն անուն հայրանուն	ամսական	ամիսների քանակը	ընդամենը պահանջվող գումարը	ամսական	ամիսների քանակը	ընդամենը պահանջվող գումարը
1)						
2)						
3)						
4)						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ						

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում		
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ (100 000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը հիմնավորվել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)	**2016**	**2017**
1)		
2)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)	**2016**	**2017**
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր		
2) տեղական գործուղումների օրապահիկ		
3) տեղական գործուղումների գիշերավարձ		
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր		
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ		
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ		
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ		
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (ներկայացնել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)		

Խմբի ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կ.Տ.

---

* *Օգտվել ֆինանսական նախահաշիվ ներկայացնելու ուղեցույցից (հավելված N2.3)*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

* *Բացատրել և հիմնավորել ծախսերի նախահաշվի 100 000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր կետերը*

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Ֆինանսական նախահաշիվը պետք է ներկայացնել առանձին տարիների համար՝ պահպանելով ընդհանուր գումարի միևնույն չափը:

2. Դրամաշնորհի առավելագույն տարեկան գումարը կազմում է.

- 4 600 000 (չորս միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ՝ 4 անձից բաղկացած խմբի համար,
- 3 450 000 (երեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ 3 անձից բաղկացած խմբի համար:

3. Ֆինանսական նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս պետք է աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

4. Աշխատանքի վարձատրության համար նախատեսվող առավելագույն տարեկան գումարը չպետք է գերազանցի.

- 3 360 000 (երեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ 4 անձից բաղկացած խմբի համար,
- 2 520 000 (երկու միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամը՝ 3 անձից բաղկացած խմբի համար:

5. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել հետազոտական սարքավորումների և գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող այլ նյութերի ձեռքբերման ծախսեր: 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը գերազանցող սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը պետք է հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ:

6. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա գիտական միջոցառումներին մասնակցելու համար և չպետք է գերազանցի դրամաշնորհի ընդհանուր գումարի 20 տոկոսը: Գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերը պետք է հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ: Մինչև երկու շաբաթ տևողության գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը պետք է հաշվարկել ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն

որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար գիտական թեմայի կատարողները կարող են հայցել ամսական մինչև 2 000 (երկու հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Դրամաշնորհի 12-ամսյա կտրվածքով օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը:

7. Ֆինանսական նախահաշվի «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսվում է գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թողնված թեմայի ֆինանսավորման տոկոսը, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է գիտական կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերը չպետք է գերազանցեն դրամաշնորհի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի 7 տոկոսը:

8. Գիտական թեմայի կատարման անհրաժեշտությունից ելնելով՝ գիտական թեմայի Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարը, Կոմիտեի համաձայնությամբ, կարող է վերաբաշխվել տարեկան մեկ անգամ՝ դրա 20 տոկոսի չափով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

5	***Գերազանց:*** *Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:*
4	***Շատ լավ:*** *Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:*
3	***Լավ:*** *Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:*
2	***Միջին:*** *Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:*
1	***Վատ:*** *Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:*
0	***Շատ վատ:*** *Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:*

Հարցաշար

1.	**Նպատակներ**: Որքանով են արժեքավոր հետազոտության նպատակները:	
2.	**Արդիականություն**: Որքանով է արդիական առաջարկվող հետազոտությունը:	
3.	**Նորույթ**: Որքանով է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
4.	**Իրագործելիություն:** Որքանով է իրատեսական առաջարկվող ժամանակահատվածում հետազոտության նպատակներին հասնելը:	
5.	**Նախագիծ:** Որքան հստակ է ձևակերպված նախագիծը:	
6.	**Համապատասխանություն:** Որքանով է նախագիծը համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
7.	**Իրականացում:** Որքանով է իրատեսական նախագծի իրականացումը:	
8.	**Առնչությունն այլ բնագավառների հետ:** Որքանով է նախագծի իրականացումը նպաստում տվյալ կամ հարակից բնագավառների առաջընթացին:	
9.	**Կարևորություն:** Որքանով է նախագիծը նորարարական իր արդյունքների հնարավոր կիրառություններով (գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիական արտադրանքների, համակարգերի և մեթոդների բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն):	
10.	**Միջազգային համագործակցություն:** Որքանով է նախագծի իրականացումը նախատեսում միջազգային համագործակցություն:	
11.	**Իրականացման մեթոդներ:** Որքանով են նախագծում ներկայացված մեթոդները համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
12.	**Իրականացման փուլեր:** Որքանով են համապատասխանում նախագծի իրականացման փուլերը հետազոտության նպատակներին հասնելուն:	
13.	**Իրականացման փուլերի վերահսկելիություն:** Որքանով է իրատեսական նախագծի իրականացման փուլերի վերահսկելիությունը:	
14.	**Մարդկային ներուժ:** Որքանով է համապատասխանում խմբի անդամների թվաքանակն ու մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
15.	**Տեխնիկական ապահովվածություն:** Որքանով են բավարար առկա և (կամ) ձեռքբերվելիք տեխնիկական միջոցները նախագծի իրականացման համար:	
16.	**Արդյունքների տնօրինում:** Որքան հստակ է ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը. արդյունքների օգտագործում և տարածում (հրապարակումներ, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
17.	**Նախահաշիվ:** Որքանով է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումն ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն:	
Փորձագետի ընդհանուր գնահատական		

Փորձագետի մեկնաբանություններ *(ծավալը չի սահմանափակվում)*

Հետազոտության նպատակների մեկնաբանություն (հարցաշարի 1-4 կետերը):
Նախագծի մեկնաբանություն (հարցաշարի 5-10 կետերը):
Նախագծի իրականացման մեկնաբանություն (հարցաշարի 11-17 կետերը):

Մասնագիտական խորհրդի գնահատական

1.	**Հետազոտության ղեկավարում:** Որքանով է համապատասխանում ղեկավարի մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
2.	**Կատարողների կազմ:** Որքանով է համապատասխանում կատարողների մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
3.	**Երիտասարդ մասնագետների ընդգրկվածություն:** Որքանով է համապատասխանում խմբում ընդգրկված երիտասարդ մասնագետների (մինչև 35 տարեկան), ասպիրանտների, ուսանողների մասնագիտական ուղղվածությունը նախագծի իրականացմանը:	
Մասնագիտական խորհրդի ընդհանուր գնահատական		